ՀՀ ՏԿՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ

Ներդրումային ծրագրերի համակարգման տնօրինություն

ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

Ամսաթիվ՝ 01 Օգոստոս 2014թ.

Վարկ No՝ *L2860-ARM , Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր – Լրացուցիչ ֆինանսավորում*

Պայմանագիր No՝ *L2860-ICB-1-10/1, Թալին քաղաքի ջրամատակարարման համակարգերի բարելավում*

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ՝ 12 Սեպտեմբեր 2014թ., 15:00 /տեղական ժամանակով/

1. ***Հայաստանի Հանրապետությունը*** ֆինանսավորում է ստացել Ասիական Զարգացման Բանկից (ԱԶԲ)՝ ***2860-ARM Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագրի – Լրացուցիչ ֆինանսավորման*** ծրագիրն իրականացնելու նպատակով: Վարկի միջոցների մի մասը նախատեսվում է օգտագործել վերոնշյալ պայմանագիրն իրականացնելու համար: Պայմանագիրը համաֆինանսավորվելու է ՀՀ կառավարության կողմից: Մրցույթը բաց է ԱԶԲ-ի կողմից իրավասու ճանաչված բոլոր երկրների հայտատուների համար:

2. **«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ (Պատվիրատու)** իրավասու հայտատուներին հրավիրում է ներկայացնել կնքված հայտեր ***L2860-ICB-1-10/1, «Թալին քաղաքի ջրամատակարարման համակարգերի բարելավում» պայմանագիրն իրականացնելու համար:***
Աշխատանքները բաղկացած են հետևյալից.

- 2x1000մ^3 և 2x250մ^3 ՕԿՋ-ների վերանորոգում՝ տեխնոլոգիական հանգույցների և խողովակների վերակառուցմամբ,
- 21.4կմ երկարությամբ de50-de160 տրամագծի պոլիէթիլենե ջրագծերի կառուցում,
- 4.9կմ երկարությամբ de20-de32 տրամագծի պոլիէթիլենե մուտքագծերի կառուցում անհատական տների համար՝ 650 ջրաչափական հորերի տեղադրմամբ:

3. Միջազգային մրցույթը կիրականացվի ԱԶԲ-ի **«Մեկ փուլ - մեկ ծրար»** մրցութային ընթացակարգի համաձայն և բաց է ԱԶԲ իրավասու անդամ երկրների բոլոր հայտատուների համար:

4.Մրցույթին կարող են մասնակցել միայն հետևյալ որակավորում ունեցող իրավասու հայտատուները.

-Շինարարության միջին շրջանառությունը պետք է կազմի նվազագույնը 2,025,000 (երկու միլիոն քսանհինգ հազար) ԱՄՆ դոլար, որը հաշվարկվել է որպես վերջին 3 (երեք)

տարիների ընթացքում ավարտված կամ ընթացքի մեջ գտնվող պայմանագրերից ստացված ընդհանուր վճարումներ:

- Ֆինանսական միջոցների մատչելիություն կամ առկայություն, ինչպիսիք են իրացվելի ակտիվները, այլ պարտավորություններով չծանրաբեռնված նյութական ակտիվները, վարկային գծերը և այլ ֆինանսական միջոցներ, բացի որևէ պայմանագրային կանխավճարներից՝ 450,000 (չորս հարյուր հիսուն հազար) ԱՄՆ դոլար գումարով:

- Վերջին 3 (երեք) տարիների ընթացքում որպես կապալառու, հիմնական կապալառու կամ ենթակապալառու ունենա առնվազն 1 (մեկ) պայմանագրի մասնակցություն՝ առնվազն 1,080,000 (մեկ միլիոն ութսուն հազար) ԱՄՆ դոլար արժեքով հաջողությամբ կամ հիմնականում ավարտված: Կատարված աշխատանքների փորձը պետք է նման լինի 10կմ ՊԷ խողովակաշարի կառուցման աշխատանքներին:

-Բոլոր դատական գործընթացները պետք է դիտվեն որպես լուծված ընդդեմ հայտատուի, ինչն ընդհանուր առմամբ չպետք է կազմի հայտատուի զուտ կապիտալի 50 տոկոսից ավելին:

Մրցույթի մասնակիցները պետք է ունենան հիդրոտեխնիկական կառույցների կառուցման վավեր լիցենզիա/թույլտվություն՝ տրված ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից: Նման լիցենզիայի/թույլտվության բացակայության դեպքում մրցույթի մասնակիցները պետք է հայտի հետ միասին ներկայացնեն ստորագրված փաստաթուղթ այն մասին, որ պայմանագրի շնորհման դեպքում մրցույթի մասնակիցը կներկայացնի ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված համապատասխան լիցենզիա:

5.Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու և մրցութային փաստաթղթերը ստուգելու նպատակով հայտատուները պետք է դիմեն հետևյալ հասցեով.

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ (ՀՋԿ ՓԲԸ),
Ներդրումային Ծրագրերի Համակարգման Տնօրինություն (ՆԾՀՏ),
Պրն Նորիկ Գևորգյանին, ՀՋԿ ՓԲԸ ՆԾՀՏ-ի տնօրեն,
Էդուարդ Չիլ-Հակոբյանին, ՀՋԿ ՓԲԸ ՆԾՀՏ-ի Ծրագրի կառավարիչ,
Քրիստինե Ղամբարյանին՝ Գնումների մասնագետ,
Հասցեն՝ Վարդանանց փակուղի 8ա, 3-րդ հարկ, ք.Երևան, 0010, ՀՀ
Հեռ./ ֆաքս՝ (374 10) 54 28 77
էլ. փոստ՝ ngevorgyan@armwater.am, echilakopyan@armwater.am,
kghambaryan@armwater.am

6. Անգլերեն լեզվով մրցութային փաստաթղթերը ձեռք բերելու համար շահագրգիռ հայտատուները պետք է.

ուղարկեն գրավոր նամակ ***No L2860-ICB-1-10/1, «Թալին քաղաքի ջրամատակարարման համակարգերի բարելավում»*** *պայմանագրի մրցութային փաստաթղթերը ձեռք բերելու համար,*

վճարեն **100 ԱՄՆ դոլար կամ 40 000 ՀՀ դրամ** չփոխհատուցվող գումար: Վճարման ձևը պետք է լինի գումարի անմիջական վճարում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի դրամարկղ կամ ուղղակի դեպոզիտ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ներքոնշյալ հաշվեհամարին.

ԱՄՆ դոլար՝ ՎՏԲ բանկ Հայաստան, հ/հ 160483054419, SWIFT կոդ՝ ARMJAM22, Նալբանդյան փ.46, 0010, Երևան, Հայաստան, կամ

ՀՀ դրամ՝ Արդշինինվեստ բանկ, հ/հ 247010078175, SWIFT կոդ՝ ASHBAM22, Գրիգոր Լուսավորիչ փ.13, 0010, Երևան, Հայաստան:

7. Հայտերը պետք է ներկայացվեն՝
- վերոնշյալ հասցեով,
- վերջնաժամկետի օրը կամ դրանից առաջ՝ **2014թ. 12 Սեպտեմբեր, 15:00** /տեղական ժամանակով/,
- մրցութային փաստաթղթերում սահմանված հայտի երաշխիքի հետ միասին:

Հայտերը կբացվեն վերջնաժամկետից անմիջապես հետո՝ մասնակցելու ցանկություն հայտնած հայտատուների ներկայացուցիչների ներկայությամբ: